ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.04.200թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/51

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 19.03.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.03.2020թ. թիվ 26/26-1/4084-2020 գրությամբ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 13.03.2020թ. թիվ 68/439 գրության հիման վրա, 17.03.2020թ. թիվ 26/26-1/4084-2020 գրությամբ նախաձեռնել է «Տեխէներգաշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տեխէներգաշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տեխէներգաշին» ՍՊԸ-ն 17.03.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ն սկսած 2014թ-ից հանդիսանում է ռուսական Նավիգատոր և Օնլայթ ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Նշված ընկերությունները հանդիսանում են Ռուսաստանի Դաշնությունում առաջատար էլեկտրատեխնիկական սարքավորումներ արտադրողներ:

«Տեխէներգաշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը զբաղվում է էլեկտրատեխնիկական սարքավորումների ներմուծմամբ և վաճառքով սկսած 2013թ-ից, որի ընթացքում բազմաթիվ անգամ Ընկերությունը մասնակցել է պետական գնումների գործընթացին և մատակարարել ապրանքներ չխախտելով գնումների գործընթացի և մատակարարման պայմանագրերի որևէ դրույթ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 26.02.2020թ. մասնակցել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից հայտարարված թիվ ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով մրցույթի թիվ 6-11-րդ չափաբաժիններին և բոլոր չափաբաժիններով ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, սակայն մրցույթային հանձնաժողովը մերժել է 6, 7, 8, 10 և 11-րդ չափաբաժիններով ներկայացված հայտը՝ այն համարելով տեխնիկական պարամետրերին չհամապատասխանող:

Միաժամանակ նշել է, որ վերոթվարկված բոլոր չափաբաժիններով սահմանված տեխնիկական պարամետրերին համապատասխան Ընկերության կողմից ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն բոլոր չափաբաժիններում միայն մեկ տեխնիկական տվյալ, այն է լուսադիոդների քանակը կամ ավել է եղել կամ պակաս սահմանված քանակից: Այսինքն՝ մի դեպքում պատվիրատուի նշված հզորությունը և լյումեն/վատտ էֆեկտիվության գործակիցը հնարավոր է եղել ապահովել ավելի պակաս լուսադիոդներով, իսկ մեկ այլ դեպքում՝ ավել լուսադիոդների քանակով: Նշված հանգամանքը Ընկերության կողմից բացարտվում է նրանով, որ ապրանքի տեխնիկական բնութագիրը լրացնելիս Ընկերությունը խորհրդակցել է արտադրող կազմակերպության հետ և վերջիններիս տեխնիկական մասնագետները նշել են, որ լուսադիոդների քանակը գտնվում է թույլատրելի շեղման դաշտում և քանի որ Ընկերության ներկայացված բոլոր ապրանքների բնութագրերում էֆեկտիվության գործակիցը ավել է 80 լյումեն/վատտ-ից,

այսինքն՝ ապահովում են պատվիրատուի մատնանշված լուսային հոսքը և հզորությունը, ուստի Ընկերությունը կարող է ներկայացնել համապատասխան առաջարկը:

Ընկերությունը նշել է, որ նպատակ չի եղել մոլորեցնելու գնահատող հանձնաժողովին կամ ներկայացնելու ոչ լիարժեք տեխնիկական բնութագրեր, այդ իսկ պատճառով Ընկերությունը ներկայացրել է այն տեխնիկական տվյալները, որոնք Ընկերությունը ստացել է արտադրող կազմակերպությունից և Ընկերությունը չի խաբել գնահատող հանձնաժողովին: Ընկերության կարծիքով լուսադիոդների քանակը չպետք է հանդիսանար խոչընդոտ, քանի որ գնահատող հանձնաժողովի նիստին Ընկերությունը ներկա էր գտնվել և մանրամասն բացատրել էր Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տվյալները և նաև այն հանգմանքը, որ արտադրող կազմակերպությունը մատնանշել է, որ տվյալ շեղումը չի կարող հանգեցնել որակական փոփոխությունների, ընդհակառակը՝ Ընկերությունը ներկայացրել է առավել լուսային հոսք ապահովող լուսարձակներ:

Ընկերությունը հայտնել է, որ երբևիցե թույլ չի տվել պետական գնումների գործընթացի խախտումներ և միշտ մատակարարել է որակյալ ապրանքներ:

Ամփոփելով՝ Ընկերությունը խնդրել է դիտարկել հնարավորությունը «Տեխէներգաշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/51 ընթացակարգի շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երքաղլույս» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.03.2020թ. թիվ 68/439 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Տեխէներգաշին» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյուքներով 6-11-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ:

Պատվիրատուն նշել է, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով, Ընկերությանը ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Ընկերությունը 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով կրկին ներկայացված տեխնիկական բնութագրերում ամբողջությամբ չի շտկել անհամապատասխանությունները, ըստ որի ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի ամբողջական պահանջներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/51 ընթացակարգի շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 6-11-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Տեխէներգաշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2020թ. թիվ 26/26-1/4084-2020 գրությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 13.03.202թ. թիվ 68/439 գրությունը և կից փաստաթղթերը, «Տեխէներգաշին» ՍՊԸ-ի 17.03.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն

օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 6-11-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Տեխէներգաշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 6-րդ - լուսարձակ LED 200 վատտ, ցրված լույսով, 7-րդ- լուսարձակ LED 150 վատտ, ցրված լույսով, 8-րդ - լուսարձակ LED 100 վատտ, ցրված լույսով, 9-րդ - լուսարձակ LED 50 վատտ, ցրված լույսով, 10-րդ- լուսարձակ LED 20 վատտ, ցրված լույսով և 11-րդ - լուսարձակ LED 10 վատտ, ցրված լույսով, չափաբաժինների մասով ամբողջական նկարագրում բացակայում է հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխան էլեկտրական սնուցման բլոկի վերաբերյալ տվյալը, օպտիկական բլոկի պաշտպանվածության վերաբերյալ տվյալը, արտադրության տարեթվի վերաբերյալ տվյալը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը, իսկ հանձանաժողովի քարտուղարը 05.03.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով ծանուցումը

ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ի կողմից կրկին ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

6-րդ չափաբաժնի մասով- լուսարձակ LED 200 վատտ, ցրված լույսով, ներկայացվել է օպտիկական բլոկը բաղկացած է մեկ միասնական մատրիցայից, որը հավաքված է 224 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է 200 (+-5%) հատ լուսադիոդներից և ոսպնյակներից:

7-րդ չափաբաժնի մասով լուսարձակ LED 150 վատտ, ցրված լույսով, ներկայացվել է օպտիկական բլոկը բաղկացած է մեկ միասնական մատրիցայից, որը հավաքված է 168 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է 150 (+-5%) հատ լուսադիոդներից և ոսպնյակներից:

8-րդ չափաբաժնի մասով լուսարձակ LED 100 վատտ, ցրված լույսով, ներկայացվել է օպտիկական բլոկը բաղկացած է մեկ միասնական մատրիցայից, որը հավաքված է 78 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է 100 (+-5%) հատ լուսադիոդներից և ոսպնյակներից:

10-րդ չափաբաժնի մասով լուսարձակ LED 20 վատտ, ցրված լույսով, ներկայացվել է օպտիկական բլոկը բաղկացած է մեկ միասնական մատրիցայից, որը հավաքված է 24 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է 20 (+-5%) հատ լուսադիոդներից և ոսպնյակներից:

11-րդ չափաբաժնի մասով լուսարձակ LED 10 վատտ, ցրված լույսով, ներկայացվել է օպտիկական բլոկը բաղկացած է մեկ միասնական մատրիցայից, որը հավաքված է 12 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական

բնութագրով սահմանվել է՝ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է 10 (+-5%) հատ լուսադիոդներից և ոսպնյակներից:

Ամփոփելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ենթակա է մերժման՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով:

Միաժամանակ արձանագրվել է, որ 9-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից կրկին ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, որի մասով Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական պարամետրերին համապատասխան Ընկերության կողմից ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն բոլոր չափաբաժիններում միայն մեկ տեխնիկական տվյալ, այն է՝ լուսադիոդների քանակը կամ ավել է եղել կամ պակաս սահմանված քանակից, այսինքն՝ մի դեպքում պատվիրատուի նշված հզորությունը և լյումեն/վատտ էֆեկտիվության գործակիցը հնարավոր է եղել ապահովել ավելի պակաս լուսադիոդներով, իսկ մեկ այլ դեպքում՝ ավել լուսադիոդների քանակով:

Միաժամանակ հայտնել է որ իր կողմից նպատակ չի եղել մոլորեցնելու գնահատող հանձնաժողովին կամ ներկայացնելու ոչ լիարժեք տեխնիկական բնութագրեր, այդ իսկ պատճառով Ընկերությունը ներկայացրել է այն տեխնիկական տվյալները, որոնք Ընկերությունը ստացել է արտադրող կազմակերպությունից:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների***

<u>նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ուսումնասիրելով ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելուց հետո, սահմանված ժամկետում ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված N 1.1) շտկված տարբերակը, սակայն 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների լուսադիոդների քանակները կամ ավել են եղել կամ պակաս համապատասխան չափաբաժիններով հրավերով սահմանված քանակներից:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ն ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.03.2020թ. թիվ 26/26-1/4084-2019 գրությամբ «Տեխէներգաշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տեխէներգաշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**